

ՕՐՄԱՆՑԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

5. ՕՐՄԱՆՑԱՆ ԵՎ ԻՐ ՇՐՋԱՊԱՏԾԸ

Օրմանյան շատ ալ դժգոհ չի թվիր, որ իր օրով կիրարկության մեջ չէր Ազգային Սահմանադրությունը։ Հնարավորությունները, զորս ան կուտար ժողովրդական զանգվածներուն միջամտով ըլլալու ազգային խնդիրներու, և իրավասովությունները, որոնցմով ան կօժտեր ազգային մարմինները հարցերը վճռելու ատեն, կրնային պատուհաս դառնալ փափուկ այն տարիներուն մեջ, երբ Օրմանյան կվարեր պատրիարքությունը։ Աղետ մը կրնար ըլլալ իրեն համար մանավանդ Ազգային երեսփոխանական ժողովը, եթե արտոնված ըլլար կանոնավոր նիստեր գումարել այն տարիներուն, ոչ միայն կաշկանդելով իր ամեն մեկ քայլը, այլև ամեն վայրկան սրտնեղություն պատճառելով պետական իշխանությանց, ու մասնավորաբար Պալատին, Որովհետև որքան ալ մշտական սարսափի տակ կապրեին մարդիկ, և ստիպված էին կշռել բառերուն նույնիսկ վանկերը, այնուամենայնիվ վանկերն անգամ կրնային մատի փաթթոց դառնալ Համիդի այդ վարչակարգին տակ։

Եվ արդեն Օրմանյան առհասարակ համակարծիք չերեկիր, որ Ազգային երեսփոխանական ժողովը նիստ գումարե տարին տասներկու ամիս, նույնիսկ համեմատաբար ավելի ազատ շրջաններու Անոր կարծիք Ազգային ժողովը պետք է գումարվի տարին անգամ մը միայն, Ազգային վարչությունը ընտրելու կամ անոր հաշվետվությունը լսելու համար, ի հարկին իր տեսակետները բանաձելով հիմնական հարցերու

մասին։ Այլապես մշտապես նիստ գումարող Ազգային ժողով մը, Օրմանյանի կարծիքով, գործադիր իշխանություն կդառնա ինքն ալ և կիանգարե Ազգային վարչության գործունեությունը, միջամտելով անոր ամեն մեկ քայլին, և շլատելով ամեն մեկ նախաձեռնություն, ինչպես ըրած է ներսես պատրիարքի օրով։ Օրմանյան հանգիստ էր այդ տեսակետով։ իր քայլերը կաշկանդող մը շուներ։

Եվ այսուամենայնիվ Օրմանյան որոշ կետեր հարգեց Ազգային Սահմանադրության տրամադրություններեն։ Ան հոգ տարավ, օրինակ, որ Ազգային վարչության կողքին գոյություն ունենան Ազգային Սահմանադրության նախատեսած օժանդակ մարմիններն ալ, և առաջին հերթին երեք տեսոչ խորհուրդները, — Ռատումնական, Տնտեսական և Դատաստանական, որոնք միշտ գոյություն ունեցան լրիվ կազմով։ Գոյություն ունենին նաև զանազան ազգային մարմիններ՝ Հոգարձության, խնամակալության կամ հանձնաժողովի անվան տակ։

Եատ շխարվինք սակայն մեծ-մեծ անուններեն, որոնք մաս կազմնեցին իր նախագահած վարչության կամ անոր ենթակա տեսուչ-խորհուրդներուն։ Անոնց մեծ մասը ժողովականի համեստ դերեն դուրս չելավ, և ազգային իրենց պարտականությունները լիովին կատարած ըլլալ կարծեցին նիստերե շրացակայելով։ Մարդիկ կան արդարե, որոնք Ազգին մասին կմտածեն միայն ժողովե ժողով, և այդքանով Ազգը փրկած ըլլալ կարծեն։

Եր շրջապատին մասին խոսած ատեն, շենք կրնար չառանձնացնել սակայն քանի

* Շարունակված «Եղմիածին» ամսադրի 1961 թվականի Խ և Ե-ից և Զ-ից։

մը դեմքեր, որոնք պարզ խամաճիկներ կամ խրտվիակներ չեղան մյուսներուն պես, այլ տեսակ մը հեղինակավոր և սրտցավ գործակիցները օրվան պատրիարքին: Անոնք եղեր էին, որ զինքը բերեր էին պատրիարքական Աթոռը Ազգին ճակատագիրը շանձնելու համար կարդ մը կասկածելի մարդոց, որոնք, իրենք իսկ արդեն օտարացած, ավելի ևս պիտի լրճեին հայ կյանքը: Անոնք եղեր էին դարձյալ, որ հոժարեր էին մնալ իր կողքին և Ազգային վարչության ատենապետությունը վարեր էին մեկը մյուսին մահեն հետո եվ վերջապես, անոնք եղեր էին, որ պատության մեջ վայելած իրենց բացառիկ հեղինակությամբ, վարկ պիտի բանային իրեն համար ալ: Արդարու աղոնցմե շորսն ալ, Հարություն Տատյան և Ստեփան Ասլանյան փաշաները, Տիգրան Յուսության և Գարեգի Նորատունկյան, նախախնամություն մը եղան Օրմանյանի համար այդ դժնդակ տարիներուն:

Հնարավոր չէ Օրմանյանի շուրջի մարդիկը հիշել և կանգ չառնել նախ, բացառիկ կերպով, մարդու մը վրա, որ անոր պատրիարքության առաջին հինգ տարիներուն սերտորեն գործակցեցավ անոր: Հարություն փաշա Տատյանն էր ան:

Այս բացառությունը անոր համար նախ, որովհետեւ Արթին փաշան էր, որ մեծ գեր խաղաց Օրմանյանի պատրիարք ընտրության մեջ, և եթե կարելի է ըստել, ուղարկի ինքն էր, որ կազմակերպեց այդ ընտրությունը: Հետո, Օրմանյանի ընտրութենեն մինչև իր մահը, Արթին փաշան էր, որ վարեց Ազգային վարչության ատենապետությունը: Եվ վերջապես, շնորհիվ արքունիքին մոտ ունեցած իր վարկին, Արթին փաշա վարկ ստեղծեց Օրմանյանի համար ալ և հեղինակություն, ինչպես ստեղծեր էր հայ հասարակության մեջ ալ, իր անոր ընծայած հովանավորությամբ:

Արթին փաշա շառավիղն էր Տատյանց համբավավոր ընտանիքին, որոնց վաստակեր էին սովորական իրենց վասողարանը և որոնք, սերունդն սերունդ, վարեր էին զայն անստուտ ձեռնհասությամբ մը: Հարություն Տատյան շեղեցավ իր նախնիքներու նախասիրութենեն: Մնած 1830-ին և ուսումը ստացած Փարիզի Սենտ-Բարբ լիսեին մեջ, Պոլիս դարձին մտավ դիվանագիտական ասպարեզ, և զանազան պաշտոններ վարել հետո, 1875-ին անվանվեցավ արտաքին գործերու խորհրդական, պաշտոն, զոր մեկ քանի ընդմիջումներով, պահեց մինչև կյանքին վերջը, 1901 թվականը:

Խորապես տեղյակ հայ լեզվին և նախանձախնդիր հայ ալվանդությանց, իր խորքին մեջ չերմ աղքասեր հայ պահպանողականի տիպարն էր Արթին փաշա, որ գիտեր պետական գործերու մեջ պահանջված հավատարմությունը ազգային շահերու հետ հաշտեցնելու փափով արվեստը: Պետական ինչ պաշտոն ալ վարեց, մտքեն երբեք շանեց հայ ժողովուրդը, նույնիսկ այն պահուն, երբ, արտաքին գործերու խորհրդական, ինք կվարեր կերպով մը Թուրքիո արտաքին քաղաքականությունը, և երբ, ազգային գործերու կուտական, ինք կազմականությունը, և այս աղքատքն անցուցած իր ժամանակն ու պայմանները: Հետո արքունիքին և շահած անոր վըստահությունը, այն հավատքն ուներ, թե ավելի լավ կրնա ծառայել այդ կերպով նաև Ազգին շահերուն, և իր միամտությունը պահ մը հոն հասցուց, որ հուսաց հայ հեղափոխականները հաշտեցնել սովորական արքունիքին հետ, 1897—1899 տարիներուն, որպեսզի նոր աղետներ խնայի Ազգին, և այդ առթիվ նույնիսկ բանակցություններ ալ վարեց:

Օրմանյան սապես կրնութագրե Տատյանը. «Ազգային գործերու շարունակ մասնակցած, պետական պաշտամանց մեջ վարժված և հառաջացած մինչև վեղիրության աստիճան, և քաղաքագիտական բարձր հանձնարով օժոված, դիվանագիտական գրությանց քաշվարժ հեղինակ, և կալսերական իշխանութենեն հարգված ու համակրված: Տատյան մեծ հարգ ու վարկ և բարձր անուն ու պատիվ վայելեց ոչ միայն ազգային, այլև արքունական, պետական, դիսպանական և եվրոպական շրջանակներու մեջ... Վերջին անգամ իղմիրլանի հրաժարելեն և անոր վարչության ցրվելեն. ետքը՝ ազգային ձեկի վերածելու մեջ տարած ջանքը ու ստացած հաջողությունը յուր գիտելլաց երախտիքն եղավ. Վախճանեցավ 1901 հոկտեմբեր 7/20-ին, գրամական ոչ ընդարձակ վիճակի մեջ, արքեն երբեք այդ մասին հաստատուն դիրք չէր ունեցած»¹⁰¹:

Իր դիվանագիտական համբավին մարդ գժվար կհաշտեցնե սակայն իր միամտությունը՝ հասկացողության եզր մը գտնելու Համբդի և հայ հեղափոխականներու միջև: Թղի մեծ շափով արյունու Սովորականին ուղղակի պարտադրանքն էին փորձերը, որու 1897—1899 տարիներուն կատարեց հայ հեղափոխականներու մոտ, սակայն շափազանց միամտության տարած պիտի ըլլազայն իր ազգասիրությունը հուսալու համար, որ եթե խորոշություններ հրաժարին հայերը և Համբդը քանի մը բանտարկյալ

ազատե կամ երթևեկի ազատություն տա երկրին մեջ, փորձեր, որոնք չէին կրնար ի վերջո շվիժիլ, բավական երկար տևելի հետո սակայն, այսինքն նույն այդ միամտությունը բաշկուել է հետո երեք տարի տևող թղթակցությանց մեջ:

Մարդ կշվարի նաև տեսնելով Եվրոպա ուղղած իր նամակներուն մեջ այդքան փաղաքանք Համիդի հասցեին,— ինչ որ շատ տխուր պիտի ըլլար, եթե իր նամակներուն ձեռք անցնելի վախնալուն հետևանքը ըլլար,— և մինույն ատեն այդքան նողկանք Բարթողիմեոս Գամիլյանի և անոր աշխարհական արքանյալ կներուն հանդեմ, անոնց ստորնաքարշ գալարումներուն համար Համիդի գարշապարներուն առջև Պետր է հոգեկան բացառիկ ուժ ունենալ շթերանալու համար Համիդի հանդեմ պարտականություններուդ մեջ, որոնք երեմն հակապես ստրկության կհասցնեն պաշտոնյան, և մինույն ատեն գարշանք զգալու համար այնպիսիներու նկատմամբ, որոնք ստրկությունը կհասցնեն իր աներեկակայիլ շափին, այսինքն ազգային շահերու բավածանության:

Ասկե զատ, մարդուս ուժերեն վեր է հավատալ այն ամբաստանություններուն, զորս Արթին փաշա կընե իր նամակներուն մեջ ինչ-ինչ դեմքերու հասցեին, մատնանշելով զանոնք ուղղակի գործակալները Համիդի լրտեսապետներուն, եթե Տիրան Թելեկյանի մասին նման կասկածներ հետագային արձագանք գտան ուրիշ աղբյուրներու մեջ ևս, ինչպես թեհաէդդին Շաքիրի հիշատակներուն մեջ, ուր «Մարահ»-ի նախկին խմբագրապետը կներկայանա իրեն գործակալ համբավավոր Ձեմալէդդին փաշայի, մարդուղակի կիշաքաղի կարդալով Արթին փաշայի վերագրումները արևմտահայ գրականության ամեննեն պանծալի դեմքերեն մեկուն Արփիար Արփիարյանի մասին, մարդու մը, որ, ճիշտ է, տկար պահ մը ունեցավ համիդյան բանտեն արձակված ատեն, բայց որուն գրական երկը, շերմ հայրենասիրությամբ բարախուն, կըմրոստացնեն քեզ նման կասկածներու դեմ, և կարտատիս դուն քեզի հանդեմ՝ ի վիճակի ըլլալուդ համար զանոնք փարատելի:

Օրմանյան լրիվ կվայելեր Արթին փաշայի համակրանքն ու վստահությունը: 1896-ի դեպքերեն առաջ ալ անծանոթ չէին անոնք իրարու, և Օրմանյանի մասին նախապես գոյացուցած իր նպաստավոր կարծիքն էր, որ Տատյանը մղած էր անոր թեկնածությունը շերմորեն պաշտպանելու արքունիքին մոտ: Բայց անոնց մտերմությունը ամրացավ իրենց գործակցության տարիներուն՝ երբ զիրար համախոհ գտան երկուստեր հայ կյանքը հուզող գրեթե բոլոր խըն-

դիրներուն շուրջ: Օրմանյանի հանդեպ իր սնուցած ամբողջական վստահությունն էր, որ Տատյանը համարձակ կդարձներ պալատին առջև, և զինք կդրդեր զորավիր կանգնիլ անոր բոլոր զիմումներուն առթիվ:

Արթին փաշա իր կարգին մեծ ազդեցություն ուներ Օրմանյանի վրա, ըլլա պալատին մեջ իր վայելած վարկին, ըլլա իր իսկ հեղինակության բերմամբ: Տատյան իր նամակներուն մեջ բազմից կզգացնե, որ ինքն է եղած զայն պալատ դրկողը հաճախ, այս կամ այն պահանջը ներկայացնելու համար:

Միակ մղձավանջ մը հետապնդած է Տատյանը՝ ամուլ դարձնելով որևէ քառություն պալատին մոտ, թուրքերու կողմեն գան անոնք թի հայերու, և կանխել որևէ նոր աղետ, որքան ատեն որ Ազգին գուփին է ինքը: Այդ հիմնական մտահոգութեննեն կուգան նաև իր ձեռնարկները, որոնց ակնարկեցինք:

Ազելի իրատես ըլլալ կթվեր այդ մասին Օրմանյան, ոչ միայն շրածնելով Տատյանի միամտությունը՝ հասկացողության մը բերելու Համիդին ու հայ հեղափոխականները, այլ պատեհ չգտնելով նույնիսկ բանակցություններ վարել այդ առթիվ:

Տատյան իր նամակներուն մեջ հաճախ կակնարկե իր զգացած սրտնեղության ամուլ մնացած դիմումներու առթիվ, և իր փորձերուն՝ ազգային գործեր ձեռնթափ ըլլալու Ամեն անգամուն ալ, ինչպես կզգացնե ինքն իսկ, պալատը բռնադատած է զինք պաշտոնը՝ շարունակելու:



Որպեր Յազըճյան, որ մոտեն տեղյակ էր պալատի և Պատրիարքարանի հետ կապված անցուղարձերուն, իր հիշատակները ինձի պատմելու առթիվ, հիշած է շատ շահեկան դրվագ մը Արթին փաշայի կյանքեն, դրվագ, որուն կապված է Օրմանյան ալ: Միշաղեպը կվերաբերի տեղեկագրի մը, զոր պատրիարքը գաղտնի պիտի տար դժուաններուն, և որուն խմբագրությունը կատարած էր Արթին փաշան Օրմանյանի խնդրանքով, առանց որ Քաղաքական ժողովի մյուս անդամները անկե տեղեկություն ունենային: Բայց զեպքը գաղտնի չի մնար: Որպեր էֆենդիի կարծիքով, Պատրիարքարանին պաշտոնյա մըն է, որ որևէ կերպով իմացած լուրը, զայն կհասցնեն պալատ: Լուրը, բնականաբար, կհասնի Համիդի ականջը, որ կհրամայե առաջին քարտուղար Թահսին փաշային՝ Արթին փաշան պալատ կանչել գիշերանց:

Կարելի է կուահել սարսափը պիտական պաշտոնյա մը, որ կկանչվի պալատ այսպես գիշերանց: Բայց Արթին փաշան, տաքե ու պաղե անցած մարդ, Թահսին փաշայի

մոտ կմտնեա պաղարյուն, թեև կուհած կանշվելուն շարժառիթը:

— Արթին, — կմոնշե արարողապետը, զանց ընկելով նույնիսկ փաշա մակդիրը, — ճիշտ է, որ քաքրիր մը խմբագրած ես դեսպաններուն ուղղված:

Պաղարյունը դարձյալ չի կորսնցներ Արթին փաշան ու կըսե.

— Շատ ճիշտ է:

— Ճիշտ է...

— Ի՞նչ կուզեիթք: Հայոց վերաբերյալ թաքրիր մը ճգեի, որ նորին Վեհափառության թշնամինն ըը խմբագրեն...

Համիդ կպոռա հանկարծ վարագույրին ետևեն.

— Մեմնուն օլդում. Թահսին, իշերի կել, («Գոհ մնացի. Թահսին, ներս եկուր»):

Թահսին փաշա կմտնե Սովորական մոտ, որ կրհամայե Արթին փաշային տալ անոր շունեցած մեկ պատվանշանը և զայն տունը ճամբել պալատական կառուվ:



Օրմանյանի անմիջական գործակիցներուն մեջ շահեկան դեմք մը եղած է նաև Ասլանյան Ստեփան փաշան, վինվորական բժիշկ, որ ազգային երկար կյանք մը ունեցեր էր արդեն, 1896-ին Քաղաքական ժողովի անդամ ընտրվել է առաջ: Օրմանյան կգրե անոր մասին, «Ազգային շրջանակի մեջ խոհական գործիներու կարգին առաջնակարգ դիրք և զանք և արդյունք և հաջողություն ունեցած, այն աստիճան, որ կրնաք համարձակ հավաստել, թե չէ եղած ազգային խնդիր մը, որուն մեջ Ասլանյան գործոն դեր և խոհական արժանիք ունեցած ըլլա: Մանրամասնությանց մեջ մտնել դժվար կըլլա, զի պետք կըլլար 1851-ե ասդին անցած ազգային կյանքը ամբողջաբար քաղել և Ազգային Սահմանադրության սկզբնավորության անցքերը պատմել: Ասլանյանի ազգային գործոց մեջ կատարելապես սուվովիլը զինքն ալ պահ մը կասկածելի ցուցուցին, այլ շոտառվ իսկությունը հայտնվեցավ, և յուր նախնական դիրքը կատարելապես վերանորոգեցավ¹⁰²:

Օրմանյան այլուր կգրե Ստեփան փաշայի մասին: «Ասլանյան յուր գործունեության մեջ ազատական ճգտումներու զույգ կպահեր շափակը ուղղությունը, վերացական սկզբունքները չեր հեռացներ գործնական տեսությունները, և ամեն դասակարգե և ամեն կուսակցութենե հավասարապես հարգված էր. տարածայնությունները համաձայնության բերելու ձիրքն ուները¹⁰³,

Օրմանյան անխառն գոհունակությամբ կհիշե նաև գործակցությունը պատվական հայու մը, Տիգրան Յուսուֆյանի, վճռաբեկ ատյանի անդամ և ազգային փորձառու գործիչը որ շերմորեն ողջուներ էր տարիներ առաջ իր դարձը դեպի Հայ Եկեղեցին և հետագային աջակցեր իր պատրիարք ընտրության, և որ, հիմա ալ, իր պատրիարքության ասեն, կօժանդակեր իրեն իբրև ժողովական: Անաշառ, և վեճերու մեջ խաղաղարար իր դերով համբաված այս մարդը քաղաքացիական քաղության ժեստեր ալ ունեցած էր:

«Տիգրան Յուսուֆյան, — կգրե Օրմանյան, — առաջին երիտասարդությնեն ազգային գործերով զբաղած, ամեն ժողովներու և խորհուրդներու անդամակցած և ատենապետած, և բացարձակ վարչապետություն ալ վարած երբոր ժողովական գրությունը տեսչական գրության վերածվեցավ ներսեսի օրով: Մասնակից գտնվեցավ ամեն ազգային նշանավոր խնդիրներու և հովանակներու, և փայլեցավ իրեն սեփական հաշտարարի և համերաշխության աշխատողի ջիսավոր դեր ունեցավ 1896-ին ընտրված Վարչության մեջ, որուն ատենապետությունն ալ վարեց Տատյանի և Ասլանյանի մահերեն ետքը: Պատական պաշտոնեության մեջ զատական նյուղին ծառայեց մինչև վերը, և մինչև վճռաբեկ ատյանի անդամակցության բարձրացավի: Ծատ նշանավոր դատերու դատավոր նստեցավ, և հիշատակելի է յուր նախաձեռնությունը, երբոր նախկին կայսր Սուրադի և մայր կայսրուհին դեմ հարուցված ամբաստանության ընթացքը խափանեց, Միդհատ փաշայի և ընկերաց դեմ Արդուլ Ազիզի անունով վարած զատին մեջ՝, և, ինչպես կգրե այլուր, «որշափ ալ բարձրագույն հաճույքը հակառակ կիսափագեր»¹⁰⁴, այսինքն հակառակ Սովորականի կամքին:

Կարկառոն դեմքերու կարգին, որոնք Օրմանյանի ժողովականներն եղան, Գաբրիել էֆենդի նորատառնկյանն ալ կար, որ այն օրերուն Բարձրագույն դոան իրավագետ խորհրդականն էր, և որ, «Հուրրիեթա-ի շրջանին, Սայիդ և Քյամիլ փաշաներու զահիճներուն ալ պիտի մասնակցեր իբր հանրօգուտ շինությանց և արտաքին գործերու նախարար կուրզ, խոհեմ և զգուշավոր մարդ էր նորատունկյան, հեռու վեճերը և ելույթները, ու կրնար հարմարի ամեն վարչակարգի: Օրմանյան որևէ ակնարկություն չունի անոր կատարած դերին իբրև ժողովական կամ գործակից, թեև Արթին փաշայի մահեն հետո ատենապետած ըլլա Քաղաքական ժողովին, եթե

102 Ռեսուրս և խոսք, էջ 430:

103 Անդամական պատում, Դ, էջ 5149:

104 Անդ, էջ 5388:

105 Ռեսուրս և խոսք, էջ 433:

Օրմանյանի նախագահության տակ գործող ազգային վարչություններուն մեջ աշքառու դեր չունեցավ, սակայն զգալի եղավ իր գործունեությունը իրեւ ատենապիտ զանազան ազգային հաստատությանց, որպիսին երեսն էին Սանասարյան վարժարանի խնամակալությունը և Հովսեսի հզմիրյանց գրական մրցանակի հանձնաժողովը: Ինչպես հայտնի է, «Հովորիկիթ»-ին հետո Ազգային երեսփոխանական ժողովի ատենապիտությունը վարեց պահ մը, առանց գործոն մաս առնելու ազգային գործերու մեջ, և տարիներ ետքն էր միայն, երբ արդեն թուղթիային ստիպված էր հեռանալ և թուրքերեն հոգեպահությունը վերջնականորեն, գործոն մասնակցությունը պիտի թերեր հայ կյանքին, ըլլա Ազգային պատվիրակության, ըլլա Հայկական թարեգործական Ընդհանուր Միության մեջ:

Օրմանյանի շրջանի մարդոց մասին խոսած ատեն շենք կրնար բացառություն լրնելու ուրիշ անձնագործյան մըն ալ, Արիկ Ունցյանին, ժողովուրդին «Արիկ էֆենդի»-ն, որ ամբողջ կյանք մը, իր երիտասարդութենեն մինչև իր սպանությունը 1905-ին, տքներ էր կարկառում դիրքի մը համեմելու համար գործի ասպարեզին մեջ, իր մտքեն ու սրտեն պահիկ մը հեռացնելով սակայն իր ժողովուրդը: Ամենեն ժրացան անդամներեն մեկն էր եղեր Սովելոց հանձնաժողովին, տալով ու տալ տալով հայ ժողովուրդի բացառիկ կարիքներուն համար, մեկն էր եղեր հիմնադիրներեն և երկար տարիներ հոգին իսկ Արմաշի դպրեվանքին, իսկ Օրմանյանի պատրիարքության տարիներուն, հակառակ նոր ազատված ըլլալուն բանտեն, Արմաշի հոգին մնացեր էր միշտ: Բայց ինչ որ Արիկ էֆենդին համար կյանքին մեջ, իր համեստությունը էր միշտ: Բայց ինչ որ Արիկ էֆենդին համար կյանքին մեջ, իր համեստությունը էր միշտ: Ամանյան «Հովորիկիթ»-ը գինքն ալ իր գահեն ձգեց 1908-ին, ինչպես Համբիդի շուրջը հածող բոլոր դեմքերը: Խոյս տվավ ան թեռլին, ի բացակայության դատվեցավ և դատապարտվեցավ, բայց ի վերջուն ներման արժանացավ 1911-ին Ավելցնեմ, որ իր ոչ մեկ հայավնաս բայլը ապացուցվեցավ, երբ «Հովորիկիթ»-ին հետո մաղե անցան համբդական-ները, ընդհակառակը, Ռորեր էֆենդին կրցավ հավաստել, թե հաճախ օգտակար ալ եղած է Օրմանյան պատրիարքին, իր փափսացած լուրերով ու թելագրություններով: Հետո ես իրեն հանդիպեցա թուքրեց, ուր եկեր էր քաշկրուել իր ծերությունը: այդ առթիվ էր, որ ան ինձ իր հուշերը թելագրեց:

Օրմանյան սապես կրնութագրե Արիկ էֆենդին. «Առանձին հիշատակության արժանի է Արիկ Ունցյան, նշանակալից տիպար մը, կառողությամբը, բարերարությամբը, վարչականությամբը, նախանձահուզությամբը և եկեղեցակարությամբը: Ազգային ամեն ծառայությանց մասնակցեցավ, սիրեց ամեն գործոց միջամտել, բայց խորշելով խորշեցավ վարիչ և գլխավոր երևնալի, բավականացավ պարզ անդամակցության անունով, թեպետ աշխատությանց առաջնակարգ բեռը սիրով ստանձնեց: Կրնանք համարձակ ըսել, թե չեղավ Ազգին մեջ պիտապոր գործ մը, որուն Ունցյան մասնակցած ըլլա: բայց իր մեծամեծ արդյունքներն եղան 1879-ին սովելոց նպաստող հանձնաժողովը, 1889-ին սկսած Արմաշու

դպրեվանքը, և Ազգությարի Ս. Կարապետ եկեղեցու հրկիզութենե ետքի շինությունը, սակայն Հանձնաժողովներուն մեջ պարզ անդամակիցն ավելի անուն չուներ, թեպետ ձեռնարկներուն հոգին էր, անխոնչ աշխատող, ժամանակը զո՞նող, և առատաձեռն նպաստող: Ազգային կացության և ապագային բարվոքման խնդիրն ալ զինքն անտարբեր շգրտավ, այնպես որ այլ երեսեն բանտարկության և գատապարտության ալ ենթարկվեցավ հալածանաց ժամանակական¹⁰⁶ և Միայն անխոհեմ ձեռնարկների զգուշավորությունը և կուսակցական բնանդատությանց չհապատակիլը դավաճան ձեռքեր բաշալերեցին իրեն կյանքին շխնայելու և սպանության հանդգնեցան 1905 օգոստոս 13/26-ին, Ղաւաթի հրապարակին վրա»¹⁰⁷:

Օրմանյան, բացի ժողովականներեն, իր շուրջը ուներ մարդիկ ալ, որոնք անհրաժեշտ էին իրեն պետական շրջանակներու տրամադրությանց տեղյակ մնալու և ըստ այնմ իր դիրքը ճշտելու համար իր պաշտոնական դիմումներուն առթիվ: Այդ անձերին մեկը Ռուբեր Ցաղընյանն էր, որուն մասին Օրմանյան հատուկ հատված իսկ կնվիրե իր «Խոհք և խոսք»-ին մեջ: Ըսեմ անմիջապես, որ «Ռուբեր էֆենդի»-ն ես ալ ճանցած եմ մոտեն, նախ երբ Եսայան դպրոցը կհաճախեի ես և ինք Բերայի թաղականության ատենապիտն էր, այսինքն երբ «աղա»-ն էր Բերայի, դիրք, զոր այնքան կվայլեցներ, մանավանդ շնորհիվ պետության մեջ իր ունեցած պաշտոնին, «բալա»-ի աստիճանին և իր կապերուն Համիդի առաջին քարտուղար Թահսին փաշայի հետո: Օսմանյան «Հովորիկիթ»-ը գինքն ալ իր գահեն ձգեց 1908-ին, ինչպես Համբիդի շուրջը հածող բոլոր դեմքերը: Խոյս տվավ ան թեռլին, ի բացակայության դատվեցավ և դատապարտվեցավ, բայց ի վերջուն ներման արժանացավ 1911-ին Ավելցնեմ, որ իր ոչ մեկ հայավնաս բայլը ապացուցվեցավ, երբ «Հովորիկիթ»-ին հետո մաղե անցան համբդական-ները, ընդհակառակը, Ռորեր էֆենդին կրցավ հավաստել, թե հաճախ օգտակար ալ եղած է Օրմանյան պատրիարքին, իր փափսացած լուրերով ու թելագրություններով: Հետո ես իրեն հանդիպեցա թուքրեց, ուր եկեր էր քաշկրուել իր ծերությունը: այդ առթիվ էր, որ ան ինձ իր հուշերը թելագրեց:

Օրմանյան ինքն ալ կըսե, թե Ռորեր էֆենդին թեն շատերու աշխին կասկածելի կթվեր իր ունեցած կապերուն համար, բայց ան պկանություն տնական բարեկամ ու ինձի անկեղծ

¹⁰⁶ «Ազգապատում», Գ, էջ 5369.

¹⁰⁷ «Խոհք և խոսք», էջ 432.

աւտարյացակամ մը եղած ըլլալով, օգտակար վարյալու իդ ու կամք ուներ, որով լուր տեղի կություններն ու փափառված տեղեկաբերություններն մհծապես կօգտվի և իմ ձևեռնարկներու ատենն ու կապը ճշտելու, և ակամ կարերու տեղեր թելադրություններ հայ զցընելու համարու Օրմանյան կհավաստե ի այլիքու, թե Ռոբեր Յազգեցյան Ազգին վնասաւոր ձեռնարկ մը երբեք ըրած չէ, իսկ իրեն, իր պաշտոնին ու իր գործերուն համար Հայակար պատարիմ և անկեղծ օգնական մը եղած է»¹⁰⁸.

Քանին կային սակայն Դուան մարդոց մեջ, որոնք շատ ավելի հայրենասիր էին և շատ ավելի հավատարիմ հայ ժողովուրդի շահերուն, քան շատերը գիշեր ցերեկ «Ազգին համար» կուրծք ծեծողներն էին, անոնցմէ շատերը համար պահպանողականներ էին, իրենց ազգասիրությունը հաճախ դուրս չէր ելեր ժամուն բակեն, բայց հոգիով միշտ հեռու կմնային անկե, միշտ վերապահ և զգուց, և նույնիսկ զայն չէին մտցներ իրենց հարկեն ներս: Շատերը պետական հայ մարդոցնեն ազգային մարմիններու անդամ աւ էին, իրեն երեսփոխան կամ ժողովական:

Ճիշտ է, որ Դուան հայ պաշտոնաներեն բոլորը միմնույն զգացումներով չէին կապված իրենց Ազգին հետո Տատյան Արթին փաշայի կողքին, որ տասնյակ տարիներ Թուրքիո արտաքին քաղաքականությունն էր վարած, Յըլիքզի վստահությունը առանց օր մը կորսնցնելու, և որ սակայն պահ մը մտքեն չէր հեռացուցած Ազգին շահերը ևս, կար Գաղացյան Հակոբ փաշան ալ, ելեմտական նախարար, որ Թուրքիո շահն զատ բան մը մտածելու ատեն իսկ չէր թողուր իրեն: Միքայիլ փաշայի կողքին, որ կայսեր անձնական զանձին նախարարությունը կվարեր և որ հայրենասիրության ամբողջ թափը պարպեց «Եղիշեի Վարդանանց պատերազմ»-ին նվիրված այնքան թանկագին ուսումնասիրության մը մեջ, Հովհաննես Նորյանն ալ կար, որ հայ ժողովուրդը ապերախտ կհռչակեր Համբդի շնորհներուն:

Բարձրագույն դուան մարդոցմեն անցնելով հայ աղաներուն, անոնց, որ իրենց դրամին ուժով դիրք գրաված էին Ազգին մեջ, պատկերը նույնն էր: Անոնց մեջ ալ կային անշուշտ իրենց ժողովուրդին սրտով կապված մարդիկ, որոնք հաճախ վեհանձնության վայրկյաններ ալ կունենային բացառիկ կարիքներու առջեւ. բայց աղոնց կողքին մեծ թիվ մը կկազմեին նաև անոնք, որոնք պարարտացած փորով ու դրամարկով, «զոհողությունը»

կընեին կիրակի կիրակի եկեղեցի գալու ու վարելու ժամուն գործերը, վախնալով իրենց դրամարկով բանալ, բայց Ազգին ծառայած ըլլալու միամիտ զոհունակությամբ, ուրիշ փառք շունենալով, բայց եթե թերթերու մեջ հիշատակվի և իրենց դիմացը բարեկ կցնել թաղին տիրացուն ու վարժապետը Երբեմնի հայ ամիրաներն էին, իրենց տարազը փոխած:

Հայ հարուստին հետ խոսելու համար մասնավոր ճարտարություն պետք էր, իսկ Օրմանյան կերպի թե ուներ այդ ճարտարությունը: Ճիշտ է, որ բացառիկ կոտակներ և նվիրատվություններ չեղան իր պատրիարքության տարիներուն. բայց եղածներն ալ մեծ մասամբ իր նախաձեռնության արդյունքն էին: Իր օրով էր, օրինակ, որ Պոլսու Ազգային հիվանդանոցը օժտվեցավ երկարկանի երեք թերով, — երեք հարկաբաժիններ, որոնք կառուցվեցան Մաթոս և Աբրի Ռմայան, Միքայիլ և Հովհաննես Հակոբյան, և Պատրիկ ու Գալուստ Կյուլպենկյան հարազատներու կողմե, ու կրեցին անոնց անոնը:

Օրմանյան շկրցավ միայն ծունկի բերե «Օրհնյալ գերղաստան»-ը: Կակնարկենք Գարակյոզյան կտակին, որուն տասնյակ տարիներ շկրցավ տեր կանգնիլ Ազգը, որովհետեւ կտակարարին ժառանգորդները չկամ դուրս եկան, և տարիներով շհոժարեցան Ազգին արամագարել կտակված գումարը, բարերարի տիտղոսը կորզած պահելով սակայն, այսինքն ուղեկով միշտ մնալ «Օրհնյալ գերղաստան»-ը, ինչպես կանմահացնե Արփիար Արփիարյան դասական դասնալու սահմանված երգիծական գեղեցիկ կտորի մը մեջ, ուր Օրմանյան ևս կերևա այն պատրիարքներու շարքին, որոնց օրով Ազգը չէ հաջողած տեր դառնալ կտակին, մինչ «Օրհնյալ գերղաստան»-ը շարունակած է տեր մնալ իր հավիտենական տիտղոսին: Ճիշտ է իսկապես, որ Օրմանյան ևս շկրցավ Գարակյոզյաններու համառության հաղթել, չնայելով, որ իր նախագահած Ազգային վարչության անդամներուն մեջն էր անոնց ամեննեն կամակորը՝ Գրիգոր Գարակյոզյան: Արփիարյան չէր կրնար գուշակել սակայն, որ նույնինքն Օրմանյանի պիտի վիճակեր տարիներ հետո, երբ այլևս պատրիարք չէր, Գարակյոզյաններեն բան մը փրցնել Ազգին, ու անոնց կանգնել տալ Գարակյոզյան որբանոցը Շիշլիի բարձունքին վրա: Ազգին ակնկալություններեն գույզն մաս մըն էր միայն, որ Ազգին կուգար:

Հոգևորականները, որոնք կշրջապատեին Օրմանյանը իր պատրիարքության օրերուն,

Կրոնական ժողովի անդամներն էին առավելապես, թեև Պոլսու մեջ իր օրով բարձրաստիճան հոգևորականներու պատկառելի թիվ մը կար: Կրոնական ժողովի անդամները, գոնես անոնք, որ Պոլիս կմնային, բացառիկ հեղինակություններ չէին սակայն Օրմանյանի օրով, և անոնցմե շատերը միայն թիվ կրացնեին, իսկ այդ թիվն անգամ տակավ կապակսեր, որովհետև մեռնողներ և երկրներ մեկնողներ կըլլային, իսկ անոնց տեղ նորեր ընտրելու հրաման չկար:

Պոլիսը, ինչպես ըսինք, լեցուն էր սակայն հոգևորականներով: Անոնց մեկ մասը Պոլիս կմնար հարկադրանքի տակ: Համիդ չէր ուզեր, որ գավառները պտտին իր կասկածած մարդիկը: Եթե հզմիրուան ու Խարախանյան Երասաղեմ կապրեին իրք աքսորական բարկան Պոլիսն ալ ուներ իր աքսորական եպիսկոպոսները, ինչպես Գրիգորիս Ալեաթեանը, Մկրտիչ Վեհապետյանը և Եղիկ Ալպահումին: Տեսակ մը աքսորական ալ Բարգեն Կյուկեսերյան, Հակոբ Շահպաղյան և ներսւ Դանիելյան վարդապետներն էին:

Եվ սակայն որևէ բարձրարաստիճան հոգևորական շկար Պոլսու մեջ, որ կարենար շուրջ ձգել որևէ կերպով օրվան պատրիարքին վրա: Հին օրերու իր հմայքը շալկած՝ Մելքիսեդեկ Սուրադյան հզմիր քաշված էր, ուր և պիտի մենաներ քիչ հետո, Խուրյան Արմաշ կմնար և անկե ի վերջո իզմիր պիտի անցներ ուղղակի, առանց Պոլսու մեջ որևէ դեր ունենալու, Խորեն Աշքըյան և Բարթողիմեոս Զամիշյան, ստվեր մը առանձնացած, կաշխատեին մոռցվիլ, Գրիգորիս Ալեաթեան ծվարած էր Սկյուտար, Համիդին վախեն, ինչպես որ մեյ-մեկ կողմ ծվարած էին նզնիկ Ալպահումին և Մկրտիչ Վեհապետյանը, իրենք ևս վախնալով լուսին երևալի: Անդին, խոր ծերության մեջ, հաշվի չէր առնվեր այլևս Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբիայանը, իսկ Տիմոթեոս Սափրիշյան, հերոսը ատենին ծերության դրկված առաքելության, իր ծերությունը քարշ կուտար Ազգային հիվանդանոցին մեջ: Հրապարակին վրա կտեսնվեին Վահրամ Մակունին և Հմայակ Դիմաքսյանը միայն, որոնք սակայն վաղուց կորսնցուցած էին իրենց հմայքը և Գրիգորիս Հովհաննեսյանը, որ հմայք երբեք ունեցած չէր: Կար ու շկար Գեորգ Երեցյանը կար միայն, որ իր արտաքինով ու խոսքի ճարտարությամբ կիործեր ավելի շատ նարդեցը հիշեցնել, և որ իր շուրջը համբավ ալ կրցած էր ստեղծել:

Արտասովոր գեմքեր շկային Պոլիս մնացած վարդապետներուն մեջ ալ Բացի անոնք, որոնք ստիպված էին պատրիարքական վոխանորդ ժառանգեց իր նախորդներեն և զոր գովը պահեց միշտ իր պատրիարքության ամբողջ:

Հակոբ Շահպաղյանն ու Ներսես Դանիելյանը իբրև արքունիքին աշքին փուշ, ինչպես հիշեցներ, հին օրերեն մնացած խլյակներու թիվ մը ալ կար, ինչպես Վահրամ Պարսիակացին, ծանոթ իր բանասիրական երկերով և երգիծական առակներով:

Փոխարքեն՝ քահանաներու մեջ պատկառելիները կային: Այդ կարգեն էր Հովհաննես Մկրտիչը, հմուտ ու բանասեր, որ պատրիարքական վոխանորդությունն էր վարած Խրիմյան ու Վարժապետյան պատրիարքներու օրով և որուն ետևեն շուրջ մը կքալեր երբ եկեղեցի կմտներ. Սահակ Տեր Սարգսյանը, որ հեղինակն էր Շինական կրոնագիտության մը և որ ուսուցիչ էր հիմա Կեդրոնականի մեջ. Խորեն Փեհլիվանյանը, որ նովսպես հեղինակ էր կրոնական գրքերու, առանց հիշելու այն պատվական քահանան նորեր՝ Հուսիկ Քաջունին և Վահան Խոյանը, զորս Համիդ գավառեն ձերբակալու Պոլիս էր բերեր:

Բարեբախտ էր Օրմանյան, որ ատենատեն իր սաներով կլեցվեին պահ մը Պոլսու հայ եկեղեցիները: Արմաշականներ միշտ ալ կըլլային Պոլսու մեջ և զանոնք թագերը քարոզի կղրկեր Օրմանյան: Ամեն անգամ, որ անոնք Արմաշեն կմեկնեին զավառ, կամ Պոլսեն կանցնեին մեկ թեմեն մյուսը փոխադրվելու համար, պատրիարքը ատեն մը քովը կպահեր զանոնք, որպեսզի քիչ մը թարմություն մտնե եկեղեցիներու մեջ: Անոնցմե երկութը մշտապես մոտն էին արդեն իրը քարտուղար, և միևնույն ատեն քարոզության պաշտոն ունեին տարբեր եկեղեցիներու մեջ:



Ամրովզացներու համար Օրմանյանի շըրջապատը, պահ մը մտնենք Պատրիարքարան ալ Օրմանյանը, ասան ձեռք առած ատեն, համեստ մարդիկ գտեր էր շուրջը. ումանք փորձառությամբ օժտված, բայց մզկուտած էին ա'լ ուրիշներ զորկ էին որևէ ձեռնհասութենե. կային ալ, որոնց վրա ուղղակի հսկել պետք էր: Հրաշք պիտի ըլլար, այս կազմով, կառքը քշել: Օրմանյանի ձեռնհասությունը և կորովը պետք էր ունենալ, որպեսզի շարժման մեջ մտնեին այս բոլորը, ոմանց ծերությունը զգալի ըլլար, ուրիշներու ապիկարությունը: Այնպիսի մեկը պետք էր գործի գլուխ գար, որ ինքը տեսներ շատերուն զործը և աշխատանք մը հնարեր ամեն մեկուն համար, մինչև որ օր մը հաջողեր թարմություն մտցնել շուրջը:

Գաբրիել եպիսկոպոս Ծիլահիրճյանը, զոր Օրմանյան իրը պատրիարքական վոխանորդ ժառանգեց իր նախորդներեն և զոր գովը պահեց միշտ իր պատրիարքության ամբողջ:

առողջությանը, պարզ խրտվիլակ մըն էր սպականին մեջ, ճիշտ եղբաս վարդապետին պես, որ «ժամօրհնող» տիտղոսը կկրեր և ուսուրիշ պարտականամթյուն շոներ, բայց եթե չէի հեծած երթալ Օրմանյանի կառքին առաջին պատրիարքական ասան ի ձեռին: յոթորոր թաղերը կճանչնալին զինք, բայց ոչ գործ ձայնը լսած էր:

Իսկ պետական պաշտոնատուներու հետ աշխարհերություն պահելու համար Պատրիարքարանը իր հատուկ պաշտոնյան ու-

ներ, իր գործակատարը կամ գործակատարները, կամ, թուրքերն իրենց կոչումով «Էափու-օղլանի»-ն: Քիլերը միայն սակայն իրենց պաշտոնին մարդն էին եղեր, ոմանք ապիկար եղեր էին, որիշներու ներսը պակ սած էր Հայը: Օրմանյան իր հոգերը գրած ատեն, Արքի Ֆեանյանին միայն բացառություն կընե: անոր վրա միայն վստահություն ունեցեր էր:

Հիմա, որ Քիլ թի շատ ճանշագաք Օրմանյանի շրջապատը, համարձակեցեք դեռ ըսել, թի ինքնազլուկ գործեց ան հաճախ պատրիարքության իր տասներկու տարիներուն....

6. ԵՐԲՈՐ ՀՈԳԻՆ ԿԽԱՄՐԻ

Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիները այլապես ալ դժնդակ պահեր էին հայ ժողնվորդին համար: Համբիդի 32 տասարվան միահեծան իշխանության ամենեն զարդուելի շրջանն էր, և բովանդակ երկիրը խամրած էր Հոգեպետ Հայ կյանքը, ողոր ողևորության շրջան մը կրցեր էր ապրիլ քանի մը տասնյակ տարի, հիմա ինքնալ կհեծեր զականի մը ճիրաններուն մեջ:

Հայ թատրոնը շքացեր էր իսպառ. Հայ արառը շատոնց չէր լսվեր բեմին ով որ կըրցեր էր Կովկաս անցնիլ, բախտավոր էր եղեր, ինչպես Սիրանուշը. ով որ մնացեր էր, ստիպված էր խամրի թուրք բեմին վրա, Մենակյանին պես:

Հայ մշակութային ընկերություններ վաղուց է չկային. Հողն էին մտեր Միացյալը, Ազգանվերն ու Դպրոցասերը:

Հայ Հոգին շնչելու տեղ մը շուներ, և թաղերը դպրոցական հանդեսներուն կոպասեին տարին անգամ մը, որպեսզի պահ մը թարմանան:

Պոլոս Հայ մամուլը ևս փայլուն մակարդակի մը վրա չէր Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիներուն: Ին, մուկարդակ կարելի էր սպասել մամուլի մը, որուն վրա աշըր շորս բացած կհակեր գրաքննությունը, և ո՞յ ստիպված էր առիթը շփախցնել աղոթելու «Վեհափառ Սուլթանին արեշտառության համար»:

Օրմանյանի շրջանին շորս հայերէն օրաթերեր լուս կտեսնեին Պոլոս մեջ՝ «Մանզումեի էֆքար»-ն ու «Սուլթանդակ»-ը՝ առտոները, «Բյուզանդիկոն»-ն ու «Արևելք»-ը՝ իրրե երեկոյան թերթ, առանց հաշվելու Ճենրիտեի շարքիեւ-ն, որ լուս կտեսներ հայատառ թուրքերեն: Պետք է ըսել, որ ասոնցմե «Բյուզանդիկոն»-ն էր միայն, որուն տերն ու խմբագիրը. միևնուն անձն էին. մյուս թերթերը կհրատարակվեին հայ գիրին հետ Գեղովին կամ մոտեն կապ շունեցող

մարդոց կողմեն, իսկ իրենց խմբագիրները պատահական դեմքեր էին, որոնք միշտ կփոխվեին, հաճախ դիպվածով մամուլին մեջ իշած մարդիկ ըլլալով անոնք ևս իմբարգությանց ծոցին մեջ կային անշուշտ իրենց խիղճը պահած մարդիկ ալ, բայց անոնց վիճակված էր առավելապես ևս աշխատանքը, և իրենց ստորագրությունը չէր տեսնվեր ամիսներով, և ան ալ բոլորովին անվնաս նյութերու տակ:

Ճիշտ է, Կեդրոնական վարժարանի գրասեղաններն դեռ նոր բաժնված խանդավառ տղող խումբ մը ևս լրագրության ասպարեզ իշած էր արդեն և տեղ մը ճարած շորս օրաթերթերներն ամեն մեկուն մեջ, բայց դեռ ան ի վիճակի չէր իր դերը զգացնելու, զբաղած, ավելի շատ, գրական մարդաբներով կամ առօրյա պատիկ նյութերով:

Եթե շաշակենք «Բյուզանդիկոն»-ը, ուր կհասկնային Օրմանյանը, և «Արևելք»-ի վերջին քանի մը տարին, երբ զայն կխմբագրութեր դոկտ. Հակոբ Փոփճյան, մամուլը բարյացակամ չէր առհասարակ դեպի Օրմանյանը, թեև բոլոր թերթերն ալ անոր պատարագներուն ու քարոզներուն կվազցրնեին իրենց խմբագիրները: Իրենց այդ անքարյացակամ վերաբերմունքը կերևար անուղղակի խայթերու և հեռավոր ակնարկությանց մեջ միայն, ապա թի ոչ այն օրերու մամուլին կապակսեր պատրիարք մը քննադատելու ուժը: «Փոխարեն՝ թերթերի ոմանց անբարյացակամությունը ավելի որոշ կերպվար օրմանյանական կարծված հոգենորականներու մասին անոնց գրածներուն մեջ: Իր ձեռնասովները խծրծելով կկարծեին պատրիարքն իսկ թիրախ առած ըլլալ: Բարգեն վարդապետ, օրինակ, որ Սուլեյմանիս թերել տված էր Համբիդ իրրե տեսակ մը աքսոր և որ Օրմանյանի ձեռնասունը կկարծվեր, հաճախ նշավակ էր խայթերու Մուշի առաջնորդարանին հետ կապված բանի մը

հարյուր տոկիի հարցը, որ «Հուրբիեթ»-ին հետո միայն պիտի պարզվեր, ակնարկություններու առարկա էր հաճախ: Այդ ակնարկություններով թարգենը կկարծեին հարվածել և հանձին թարգենի՝ նույնինքն օրմանյանը:

Հայ գրականությունը, այնքան անուշ ճիշեր փորձել է հետո պահ մը, կասած էր իր հուսատու թափին մեջ: «Հայրենիք»-ի սերունդը փախած էր երկրեն, իր շունչն այ առնելով տանելով մեկտեղ: Արտասահման էին Արքիարյան, Բաշալյան, Օտաւան, Չռպանյան: Հետզհետե երկրեն մեկնած էին Զարդարյան, Որբերյան, Զապել ծսայան ևս: Եղ արտասահմանի մեջ է, որ ժիլ կարձակեր արևմտահայ գրականությունը: Հայ կյանքեն հեռու կհասուննային արևմտահայ քերթողության երեք փառքերը՝ Թիքիյան, Սիմանթո, Վարուժան, և արձակի երկու վարպետներ ալ՝ Պարթևյանն ու Երուխանը: Ասդին, Մելքոն Կյուրճյան աքսորի մեջ էր, իսկ էին սերունդեն անոնք, որ մնացեր էին փշալարերեն ներս, ինչպես Զոհրապ, Դուրյան, Սիպի, Եղիա, Թիկատինցի, Մրմրյան, Պերպերյան, Հազիկ երեմմն կերպային պարբերական անելու մեջ, Երիտասարդ սերունդը, մեջ, Տուրիանի մեջ համար շուտ մը, ուրիշներ անզոր՝ իրենց Հուզումները պոռթկալու լրիք: Այդ սերունդին մեջ Հազվադեպ եղան բախտավորները, ինչպես Զրաքյանն ու Մեծարենցը, որոնք կրցան, ցմիշտ խամրել առաջ, իրենց ներսեն հեգ մը թողով:

Գրական համեստ թերթեր անշուշտ կային, ինչպես «Մասիս»-ը Պոլսու և «Արևելյան մամուլ»-ը Իզմիրի մեջ, և թերթեր ալ, որոնք ատեն-ատեն գրական կերպարանք կառնեին, ինչպես «Մաղիկ»-ն ու «Ալույս»-ը, և մասամբ ալ «Բյուրակն»-ը և «Հանրագիտական»-ը բայց բոլոր ատոնք պղտիկ օվասիսներ էին միայն տոթակեզ անապատին մեջ, ուր ամեն ինչ կիսմարեցներ խորշակը:

Գրքեր դիպավուզ միայն լույս կտեսնեին: Թերթերու բացառիկ թիվերն էին լոկ, որ տարին անգամ մը քանի մը գրական էջ կհրամցնեին:

Տարին անգամ մը բերանփոխ կփորձեին դառնալ տարեգիրքերն ալ՝ գրական էջեր ևս տալով:

Առավելապես Օրմանյանի նախաձեռնության արդյունքն եղան Ազգային հիվանդանոցի «Ընդարձակ օրացուցք»-ները, որոնք տեսակ մը տարեգիրք հանդիսացան 1900-են սկսյալ, և որոնց ինք ևս իր գործոն աշխատակցությունը բերավ ամեն տարի մեջ-մեկ մաս հրատարակելով իր «Միսական բառա-

րան»-ին և նաև վիճակագրական այլաղան նյութեր:

Նմանապես իր գերը ևս կար քարոզներու մրցումին մեջ ալ, որ տեղի ունեցավ Հովհաննես Թավշանձյանի նյութական ձեռնորդությամբ և Հատորին մեջ, ուր ամփոփվեցան մրցանակի արժանացած քարոզները: Այդ մրցումին պիտի հաջորդեր իր տեսակին մեջ եղական մրցություն մըն ալ դարձալ միևնույն անձնավորության նպառտով, — հակալքողական մրցումը:

Եվ վերջապես Օրմանյան ինքն իսկ նախաձեռնեց «Ալույս» կրոնաթերթը, որ լուս տեսավ Պոլսու մեջ 1905—1906-ին, Բարգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյանի խմբագրությամբ, և որուն ինք ևս լայն մասնակցություն բերավ, Եղիշշե եպիսկոպոս Պուրյանի և արմաշական վարդապետներու կողքին, հոն հրատարակելով, ի միջի ալլոց, կարեոր մասեր իր «Համապատում»-ին:

Օրմանյանի փորձերը՝ ավել ներարկելու համար գուսանալ սկսող կոճղին, ընդունայն ճիգեր էին միայն:

Պատիկ կայծկլտուքներ էին այն մեծ խավարին մեջ, ուր ապրեցավ Հայ միտքը Համիդի տիրապետության վերջին տասնամյակին, շատավելով ու շքանալով տակալի: Քանի մը կաթիլ, անծայրածիր անւապտի մը մեջ:

Կրթական գործը, Օրմանյանի օրով, համեմատաբար նվազ տիսուր էր: Այդ շրջանին միշնակարգ երեք Հայ վարժարաններ կային Թուրքիու մեջ, Կեդրոնականն ու Պերպերյան՝ Պոլսու, Սանսարյանը՝ Կարին, առանց հիշելու անշուշտ Հայ կաթոլիկ կրթարանները, ինչպես և ամերիկան կոլեջները, ուր առավելապես կուսանեին Հայ տղար:

Հրաշքի պես բան մըն էր ոտքի վրա պահել Կեդրոնականը: 1896-ի արյունայի դեպքերն հետո, կարճ ընդհատում մը միայն ունեցեր էր և կրցեր էր բացվել իսկապես բանիբուն խնամակալության մը ջանքերով, պաշտոնական շրջանակներու կասկածը սակայն միշտ իր վրա, և լրտեսներու անմիշնական հսկողության տակ: Օրմանյան, որ անոր դասականուներն մեկն էր նղած ատենին, և դասականունական իր այդ կարճ շրջանը միշտ կհիշատակե ձեմարանի և Արմաշի տարիներուն հետ մեկտեղ, իր գուրգուրանքն չենացուց Կեդրոնականը սպատիակարության տարիներուն ալ, ինչպես պիտի շնորացներ Ղալաթիու եկեղեցին ալ, ուր քարոզվություն էր ըրեր Հայ Եկեղեցիլու զիրքը դասնալին անմիշական հետու Կիդրոնականը Օրմանյանի նախաձեռնություն կպար-

պատի, օրինակ, դոկտ. Հակոբ Թոփճյանի ու-
ժամանացության քանի մը տարին Պետք է ըսել,
որ լուրջ պատրաստությամբ այս մարդը, որ
մանանշան քան մը պիտի դառնար «Հուր-
դիտիբխ-ի տարիներուն, Կեղրոնականի մեր
աշաւակերտության ատեն իսկապես նոր շնոր-
շ Մը բերավ հայ մատենագրության իր դաս-
ընթացքով, — գիտական նոր հետազոտու-
թյանց շունչը հայ անցյալին մասին:

Այսպես որ, 1896-ի դեպքերն հետո որևէ
բարդութատում շկրեց Կեղրոնականը, բայց բա-
ռացառիկ ճիգեր պետք եղան, որպեսզի զայն
պաշտոնակել կարելի ըլլա, ինչ որ Օրմանյա-
դին նախագահած վարչության հաղթանակ-
ի ներեն մեկը պետք է համարել, այնպիսի
պատճու մը, երբ Կեղրոնականը աշքի փուշն
ու դորձած համիդյան տիրահռչակ վարչա-
կարգին:

Պերպերյան վարժարանի հանդեպ և բա-
ռացառիկ եղավ իր ցուց տված հոգածությու-
նը: Համոզված այն բարերար դիրին, որը
մեթեսու Պերպերյանի անհատական նախա-
ճան ձեռնությամբ ստեղծված այս կրթարանը
անտևեցած էր և կշարունակեր ունենալ հայ
կայսերի մեջ, ազգային ցուց կրթական հաս-
տատությանց՝ Կեղրոնականի և Սանասար-
ականի կողքին, Օրմանյան իր գուրգուրանքը
և անանպակաս ըրավ նաև Պերպերյան վարժա-
րանի վրային. նախ՝ անոր ժընն գտնված
չաղջրանին, 1896-ի դեպքերն հետո, երբ
աշարմարություններ ստեղծեց, որպեսզի Պոլ-
սոս սո մեջ վարժարանը շփակվի. հետո՝ հո-
գածութելլան մը կազմակերպելով անոր 1901-ին,
ունչորելլան, որ առաջին մեծարանքն էր արե-
լի մշտահայության մեջ կրթական վաստակա-
լու վորի մը հանդեպ. վերջապես՝ մեծ դաս-
տիարակին մահեն հետո 1907-ին, երբ ա-
նձնեն ճիգ ըրավ, որպեսզի կանգուն մնա-
յա դպրոցը, մինչև որ անոր զավակներն ի վի-
ճանակի ըլլան դպրոցին ղեկն ստանձնելու
հերենց ձեռքը:

Սանասարյանը բավական հեռուն էր իր
անմիջական հոգածության առարկա դառ-
նալու համար: Բայց հաստատություն մը,
որուն ստեղծման և բարգավաճման զորա-
վիկ էր եղած Կարնո իր առաջնորդության
ատեն, և որուն առաջին տարիներու կեն-
տու սունակության ինքն իսկ աջակցած էր, չէր
կրնար իր պատրիարքության տարիներուն
և և աշք հեռու պահել, մանավանդ որ Պոլ-
սոս սո մեջ էր անոր խնամակալությունը իր իսկ
մա անմիջական հսկողության տուի: Այդ հոգա-
ծությունը այնքան ալ ոյուրին չէր ցուց
ու տալ հեռվեն, երբ մանավանդ դպրոցը թա-
տերաբեմ սկսած էր դառնալ ներփին վե-
ճան երու, իր բնականոն ղեկավարությունը ան-
ձն հնար դարձած ըլլալով եռապետության

պայմաններուն մեջ, այսինքն երեք տնօրեն-
ներու Հովությանի Մատաթյանի, Գևորգ Արող-
յանի և Կարապետ Սողոկյանի, որոնք թեև
բարերարին կտակովն իսկ նվիրագործված,
երկու տասնյակ տարիներու գործակցութե-
նե մը հետո, անընդունակ սկսած էին դառ-
նալ զպրոցը իր վարկին մեջ պահել համե-
րաշխ գործակցությամբ մը: Այնպես որ
կեղրունը ստիպված էր ինք միջամտել բնա-
կան պայմաններ ստեղծելու համար Սանա-
սարյանի մեջ, Պոլսեն դրկելով նոր տնօրեն
մը հանձին Զաքարյանի, որ իր աշքերը
կփակեր 1907-ին, Կարնո մեջ, հազիվ սկսած
իր առաքելության Դպրոցը պիտի քաշըց-
վեր այսպես թատր հանդիսանալով տար-
րեր վեճերու և հուզումներու, որոնք, սակայն,
այս անգամ թատր հանդիսանալով տար-
րեր ամբողջ ուսուցիչներուն թիվը, որ 199 էր
1897-ին, հետզհետե աճելով բարձրացած էր
283-ի:

Ազգային վարժարաններ հաճախող սույն
աշակերտներեն զատ, շուրջ 1500 հայ տղաք
ալ կաճախեին պետական, օտար և մաս-
նակոր հայ վարժարաններ, ինչպես նաև
հայ կաթոլիկներու և հայ բողոքականներու
դպրոցներու:

Բացի դպրոցական թաղային հանդեպնե-
րեն, որոնց անպատճառ ներկա ըլլալու կեր-
թար Օրմանյան, ի հարկին ուղերձ մըն ալ
ընելու համար աշակերտներուն, երբեմն
Պատրիարքարանի մեջ ալ հանդեսի կտա-
ներ աշակերտները: Այդ հանդեսներեն ա-
ճենեն հանդիսավորը թաղային վարժարան-
ներու շրջանավարտներուն վկայականներուն
բաշխումն էր, որը իր ձեռքով կկատարեր
Օրմանյան, տեսակ մը ոգևորություն ստեղ-
ծելու համար, ինչպես ինքը կըսե, հայ կյան-
քի մեջ:

Հոգեկան այս ամայության առջև, որքան
խոր պետք է ըլլար կսկիծը պատրիարքի մը,
որ առաջին գիտնական հոգեորականն էր
եղեր Պոլսու Աթոռին վրա Նալանեն ի վեր,
և որուն օրով, տարբեր պայմաններու տակ,
տարբեր զարկ կրնար ստանալ մտաժնը
շարժումը հաղ ժողովուրդի ծոցին մեջ: Օր-
մանյանի նման պատրիարքի մը օքով,
որ մտավորական աշխատանքի համար իսկ
ստեղծված մարդն էր, Պոլիսը դատարկ էր
հողմով:

7. ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՎՈ ՇՈՒՐՋ

Օրմանյան, անկարող օվասիսներ ստեղծելու դուրսի կյանքին մեջ, հոգեկան կյանքը ամփոփեց եկեղեցիներու հովանիին տակ: Ամբողջ իր պատրիարքության օրով, եկեղեցվո շրջապատեն ալ դուրս չկրցավ երբեք ելլել հայ ժողովուրդի ազգային բովանդակ կյանքը:

Հոգեոր իշխանության հովանիին տակ էին ամենեն առաջ բարեսիրական հաստատությունները, և անոնց ամենուն գլուխը՝ Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցը: Հիմնված 1832-ին Պեղճյան Հարություն ամիրայի կողմեն՝ մեծագույնը բարերարներուն, որ երբեցից հայտնված ըլլա հայ հորիզոնին վրա, և որ իր կենդանությանն իսկ ըրավ իր այլազան բարերարությունները և ինքը աղքատ մեռավ, — Ազգային հիվանդանոցը կշարունակվեր երեք քառորդ դարե ի վեր, զանազան հոգաբարձությանց հոգածութենեն անցնելով հաջորդաբար, բայց միշտ մնայր, գուրգուղանքին ու հոգածությանը տակ ավելի մեծ պաշտպանի մը, որ հայ ժողովուրդն էր և որ, գիտակից անոր կատարելիք դերին, իր տասնոցներով պահեց ու հոգաց զայն այնքան տարիներ:

Պոլսո հայ կյանքին մեջ հոգեկան օվասիս մըն էր նաև այն պատվական հաստատությունը, որ Գալֆայան որրանոց կոչվեր: Համեստ հայ կնոջ մը՝ Սրբուհի մայրապետ Գալֆայանի նախաձեռնությամբ հիմնված 1866-ին, աղջկանց այս որրանոցը, թառած խասդուղի բարձունքին վրա, հայ որրուհիներ ինամեց ու դաստիարակեց այնքան տարիներ, ժողովուրդին լումաներուն ապավինած առավելապես:

Հոգեոր իշխանության շուրջ ամփոփված էին կտակներն ալ, մեծ մասամբ պատրիարքին անմիջական հսկողության տակ: Բացի Սանասարյան և կղմիրյանց կտակներին, որոնց մասին հիշեցինք ալլուր, մեծ ու պրգտիկ շատ մը կտակներ և կային, որոնցմենք իրենց ուրույն հանձնաժողովներն ունեին, միշտ ազգային իշխանությանց մականին ներքեւ:

Եթե Ազգային հիվանդանոցն ու Գալֆայան որրանոցը համազգային հաստատություններ էին և կպահպանվեին Ազգին հավաքական գուրգուրանքով, ամեն թաղ, իր սեփական եկեղեցվո շուրջին տակ կծկտած իր տեղական աղքատախնամներն ուներ: Շողողուն անուններ և շողողուն գումարներ չեն պճներ անոնց ալ նվիրատվությանց ցուցաները: Զանոնք պահողը միշտ հայ համեստ ժողովուրդն էր, մեծագույնը բարերարներուն, որովհետև ան է միայն, որ գիտես սրտանց տար:

Հեռվեն դիտողի մը համար ծիծաղելի էր անշուշտ տեսնել պատրիարք մը, որ թաղեալ պատարագի կվազե, դպրոցական հանդեսներն պակաս չէ, հասած տեղը քարոզ ու ճառ կխոսի: Պետք էր ապրած ըլլալ Համերի այդ վերջին տասներկու տարին, զգալու համար, որ աղոնք ևս բան մըն էին այդ մոայլ տարիներուն, երբ այլապես քով-քովի գալու հնարավորություն չուներ հայ ժողովուրդը, ու պատրիարքը, ինչպես ինքը կըսէ, առիթներ կուզեր ստեղծել հոգեոր ժամանցներու:

Արդարն հանդեսի, տոնի, պատարագի խենդ էր Օրմանյան և առիթ կստեղծեր թաղերը պատելու համար: Ու հիմա զինքը մտիկ ընենք. «Պատրիարքական գործունեության նշանակալից մաս մը կկազմե եկեղեցական հանդեսներու ուժ տալս, դպրաց դասերու շատնալուն հետամուտ ըլլալս, եռածայն և բառածայն օրերուն հանդիսապետի ըլլալս, տոնախմբություններ սարքելու առիթ ստեղծելու: Ունանք այնպես ենթադրեցին, թե այս պարագաներով փառավորվելու ունայնասիրութենե շարժած ըլլամ, սակայն իմ դիտումս այս չէր: Ազգային հանդեսներ բացարակապես արգիլված էին, մինչ իմ համոզմամբ, այս տեսակ հանդեսներ զգացումներ բարձրացնելու, գաղափարներ մշակելու, հոգիներու սրտապնդելու մեծապես օգտակար են, և հարկավ ասոնք արգիլվելու համար արձակված էր ընդհանուր արգելքը: Եկեղեցիները այդ արգելքեն դուրս մնացիր էին,... պատրիարքին անձը սեղմումների ազատ էր և անոր ներկայությամբ կշափակորվեր կամ կիսափանվեր ոստիկանության ներկայությունը: Ահա գաղտնիքը, որ զիս կհորդորեր եկեղեցական հանդիսությանց ուժ տալ և ամեն հանդիսությանց անձամբ ներկա ըլլալ¹⁰⁹:

Դպրաց դասերու իր տված զարկը ուրիշ բանի համար չէր ուրեմն, բայց եթե կերպում մը հոգեկան զրադում հայթալիթել հայ երիտասարդության: Տարբեր խնդիր, թե հոգեները ժամուն բակեն երեք դուրս չէին կըրնար ելլել այդ կերպով ու թոթափել մուայր, զոր իրենց կպարտադրեր վարչակարգը: Տիրացու նիտղոսը, որմեն հաճախ կամչնանք, ժամուն բակեն կուգա մեջ:

Օրմանյան կզգացնե նաև ալլուր իր նպատակը զպոաց դասերու կազմության մղում տալուն: Այնպիսի օրերու, երբ հայ համախմբուներն իսպառ արգիլված էին, դպրաց դասերը առիթներ էր գով-քովի զա-

109 ժեռնը և խոսք. էջ. 252.

ւուսու «Ասոնք շատցնելու մեջ ոչ միայն ժակարտիրեր եկեղեցական պաշտամանց կարագարագործությունն ու պայծառացումը, այլև ընդհանրական դրության օգուտը չկորոնցնելը. Վայ թեպետ ընկերություններ արգիլված էին, լարայց դպրաց գասերը եկեղեցիներու հովանավագործության ներքև դիտողութենք զերծ մնամային»¹¹⁰:

Մեծ պահքը նույնպես կոգմուրեր այն օրեւորու Պոլիսը և Արևագալու-ի օրերը եկեղեցիները բազմությամբ կլցեցին: Օրմանյան գալիքն ալ կատարեր թաղե թաղ՝ Արևագալ ըստմելու Մեծ պահքի մեջ հինգշաբթի մըն ալ վայլերապահած էր Ղալաթիո եկեղեցին. աւայրարողութենեն հետո Կեդրոնական ալ պայմանագրանար ու գասարանները կայցելու ար զատ-զատ. Հետո շաքար կրածներ աշակերտաներու:

Եռաձայն երգեցողության ներմուծումը Պոլսու հայ եկեղեցիներուն մեջ լավագույն առիթներեն մեկն եղավ Օրմանյանի համար մրողնորության պահ մը ստեղծելու, հոգիներու լուր կոնծած այդ շրջանին: Մենք ականատեսու իսկ այդ շրջանին, և ինչու չէ, նաև մասնակից ները այդ ոգմորության, որովհետև ան մեր իսկ ծոցեն սկսավ! Կեդրոնականնեն: Համեստ պատրաստությամբ, բայց մեծ կորովի տեր աղջ երաժշտագետ մը, կայս Զիլինկիրյան, — որուն անոմը թող շմոռնա գորգուրանքով պահել հայ երաժշտության պատմությունը, — երաժշտության ուսուցիչ կարգված էր Կեդրոնականի: Հրաշքի պես բան մը եղավ երգախոմքի մը կազմությունը այդքան արագ Կեդրոնականի իսկ տղոցմեն, և եռաձայն պատրագը, զոր Զիլինկիրյան հորիներ էր և զոր խումբը սորվեցավ նույնքան արագ, երգելու համար Ղալաթիո եկեղեցվու մեջ: Խումբը, որուն միացեր էին տասնյակ մը արվեստասերներ ալ դուրսեն, դարձավ իսկույն հանրային գորգուրանքի առարկա, և պիտի դառնար, քանի մը տարի հետո, կորիզն իսկ Կոմիտաս վարդապետի մեծ երգախոմքին: Անհուն էր Կեդրոնականցիներու ոգմորությունը այդ օրերուն. ամեն աշակերտ կերպով մը մաս կկազմեր խումբին, մեզ նման խեղճ բաղաձայններն անգամ: Նվաստու, — այն ատեն բանաստեղծ, ավաղ՝, — բառեր հորինեի եղանակներուն համար, զորս երգախոմքը պիտի երգեր իր մոտակա համերգներուն մեջ, և եռաձայնի օրերուն քշոց կշարժեի սեղանին վրա, ինչպես քշոց շարժելու եկավ քանի մը անգամ Մեծարենցն ալ, որ հիլվանդության համար դպրոցեն մեկնած, բայց հաճախ կհանդիպեր դպրոց, և խումբին մասնակցող բաղաձայններն մեկն էր Ռաֆայել Ծիշմանյանի:

Հետ մեկտեղ, մինչ իր ընկերներին ավելի բախտավորները, ինչպես Գառնիկ Թուղլացյանը, Կարո Քյուրքճյանը, Պողոս Գևորգյանը և այլն, խումբին մեջ կերպեին արձակ-համարձակ:

Կերևակայեք Օրմանյանի հրճվանքը իտես եռաձայնի հաղթանակին, որ հաղթանակ մըն էր իրեն համար ալ. ան ստիպվեր էր մաքառիլ բարձրաստիճան կամ մանրուկ տիրացուներու գեմ, որոնք Հայ եկեղեցվու պավանդությանց հակառակ կգտնեին բազմաձայն երգեցողությունը և որոնց գլուխը, թեև հարդին տակեն, Վահրամ արքեպիսկոպոս Մանկունին էր, և մինույն ատեն անվնաս դարձնել մատնության թուղթերը, որոնք կտեղային Ցըլզըզ Համիդը զգուշացնելով այս նորութենեն, որ կոչված էր բազմություն համախմբելու եկեղեցիները, «ու գիտե ինչու»:

Ազգային հիլվանդանոցի տոնախմբությունը ևս, ամեն տարի Համբարձման օրը, մեծ շուրջով տոնել կուտար Օրմանյան, պատրանքը տալով կարծես Աղգային Սահմանադրության տարեղարձներուն, որոնք նույնպես նույն օրերուն կտոնվեին երբեմն, նախ Բիյը ողի պուրակներուն, և հետո Աղգային Հիշվանոցի պարտեզին մեջ:

Օրմանյան հորելլաներ ևս կփնտռեր, քիչ մը ոգմորություն մտցնելու համար այս կամ այն թաղին մեջ: Այս կարգի հորելլաներն մեկն էր Բերայի Ս. Երրորդությունը եկեղեցվու հարյուրամյակը, զոր Օրմանյան տոնել տվալ բացառիկ շուրջով 1903-ին: Տոն մը, ինչ առթիվ ալ ըլլա, միշտ կստեղծե խանդապավություն մը, ու խանդապավության մեն վայրկյան սփոփանքի կաթիլ մըն է: տառապող սրտերուն համար: Բայց հայ ժողովուրդի ապրած դնդակ օրերուն համար իսկապես հեգնություն մըն էր արձանագրությունը, զոր զետեղեցին Ս. Երրորդության ճակատը իր տոնախմբության առթիվ, և որ կրսեր, թե հորելլանի այս հանդիսության Հայ Աղգը «տօնէ ու ցնծայ»: Օրմանյանը երբ տապալեցին, «տօնէ ու ցնծայ» բառերը սրբեցին քարին վրայեն:

Օրմանյանի ներմուծած նորություններն մեկն ալ «կանանց հատուկ պատարագ»-ն էր, որ, Օրմանյանի կարծիքով, իբր թե կիները ավելի ևս պիտի տաքցներ դեպի իրենց եկեղեցին, և հետեարար՝ դեպի հայ ավանդությունները:

Օրմանյան իրեն համար պարծանք կսեպե դարձյալ իր մասնակցությունը բերած ըլլալ սուզի ինչ-ինչ արտահայտությանց, որոնք ազգային ցույցի մը բնուվթն ունեին ինքնին: Իր կազմակերպած հուղարկավորությունը նախ Գրիգորիս Ալեաթճյան եպիս-

¹¹⁰ «Աղգապատում», Գ. էջ 5109.

կոպոսին, զոր Համիդ տարիներեւ ի վեր աքսորական Պոլիս կպահեր իր «Վլտանգավոր» անցյալին համար, և որ ճիշտ այդ պատճառով շկրցավ Կիլիկիո կաթողիկոս ընտրվիլ հակառակ Ազգին կամքին: Քաջություն էր բացառիկ պատիվներով թաղել զայն, և պայմանական կաթողիկոս ընել իր հուղարկությունը, ինչպես կըս Օրմանյան:

Քաջություն էր նույնապես Խրիմյանի մահվան առթիվ Օրմանյանի կազմակերպած փառաշուր Շոգեհանգիստը Մայր Եկեղեցվում էց, դեսպաններու իսկ ներկայությամբ: և խոսած քարոզը մարդու մը մասին, զոր Համիդ թշնամի նկատած էր և կնկատեր միշտ թուրք պետության և որուն Պոլսեն անցքը թույլ չէր տված, երբ ան կաթողիկոս ընտրվել հետո, երուաղեմի իր աքսորեն էջմիածին պիտի մեկներ:

Հետմահու կազմակերպած հարգանքի բացառիկ ցուցերուն կարգին, Օրմանյան կհիշե Արիկ Ունճյանի հուղարկավորությունը ևս, մարդու մը, որ թեև մեծատուն, բայց հայու սիրու կրեց և ոչինչ լինայեց հայուն համար, և որ սակայն զոհ զնաց հայու մը գնդակին: Արիկ ունճյան իր ազգային զգացումներուն համար բանտ ալ նստած էր տագնապի տարիներուն, և Օրմանյան իր

8. ԳԱՎԱԾՈՒՅ ԵՎ ԽԱՎԵՐԸ

Հին պատմություն է: Գավառը միշտ դժգու եղած է Պոլսեն: Զայն մեղադրած է միշտ, թե անտարբեր գտնված է իր ցավերուն ու կարիքներուն:

Ու տրտունքը, շատ ալ անտեղի չէր: Հայկական Թյուզանդինը տաք չէր դեպի գավառը: Ան իր տարբեր հոգերը, ինչպես և իր սեփական զբուանքներն ուներ, որպեսզի կարենար գավառը ևս մտքեն անցնել:

(Պոլիս ըսելով մենք այստեղ այն այլասերած դասը կհասկնանք, որ լրիվ քաղքենի դարձած, եվրոպան կկապվեր, առանց ներսեն բան մը փոխած ըլլալու: Այլապես բուն Պոլիսը գավառ մըն էր ինքն ալ, ուր կուգային ձուզիլ բոլոր գավառները, ամեն մեկը բան մը բերելով հետը):

Օրմանյանի օրով շատ ավելի ճնշված էր գավառը: Համիդ և իր արքանյակները կսուկային ցավառեն. կկարծեին, թե ամեն շարիք և ամեն վտանգ հոնկե կմտնե Պոլսի: Պոլսուները փակած էին համար գավառին ալ, որոնք հայ չին կոչվեր այլևս, այլ... «կաթոլիկ միլիտիթ»:

Արդ, հայ գավառը դժգու էր Ազգեն և իր պատրիարքեն, ու միշտ կտրտնջար, թե անոնք լքած են զինք իր բախտին: Ինքզինք զրկված կզգար ան որևէ պաշտպանութենե բոլոր այն կեղեքումներուն, ճնշումներուն և սեղմումներուն զիմ, որոնց ենթակա էր տեղական իշխանությանց կողմե, և որոնք կսաստկանային քանի կերպարեր վարչակարգը:

Օրմանյանին մեջ հանդգնությունն ունեցավ աղոր ալ ակնարկելու, բանի տեղ շդնելով հանգուցյալին կտակը՝ անշուր թաղվելու: և անոր պարագաներուն թախանձանքները: Քանի մը տարին անգամ մը Սահակ-Մեսրոպի տոնը ևս ոգևորության պահ մը կստեղծեր Պոլսուն մեջ. այդ օրն էր, որ տեղի կունենար Հովսեփ Նզմիրյանց գրական մրցանակի մրցանակարաշխությունը:

Հովսեփի հզմիրյանց, զլլարցի, 10 000 ուուրիի կտակ մը ըրեր էր 1884-ին, կտակված գումարին տոկոսով վարձատրելու համար գրականության և պատմության վերաբերյալ լավագույն երկասիրությանց հեղինակները:

Կոտակին նախատեսած մնայուն հանձնածողով Պոլիս կմնար և նախագահն էր ինքը պատրիարքը: Պոլսուն մեջ տեղի կունենային մրցանակներու բաշխման հանդեսներն ալ, և ընթերցումը քննիչներու տեղեկագիրներուն, որոնք երբեմն բանասիրական ուսումնասիրությանց ընտիր էջեր կըլլային:

Հովեկան կյանքը, Օրմանյանի օրով, կծկուած էր այսպես Եկեղեցվու հովանիին տակ: Եվ այնուամենայնիվ ան կոնծած կմնար: Շատ հզոր էր իսորշակը, որպեսզի պատիկ օվասիսներով ան թարմանալ կարենար:

Պատ, փակ էր դուռը ապրուստ ճարելու համար գավառեն եկող հայ պանդուիտներուն: «իմաներուն մեջ զարիբ ա'լ մնացած չէր», ու քարափին վրա հայ բեռնակիր այլևս շկար, մանավանդ Համիդի վերջին տարիներուն: Պոլիսը փակ էր նաև ուսում առնելու համար Պոլիս գալ ուղղող հայ պատանիներուն: Որոշ բախտավորություն մոտակա գավառներու հայերն ունեին, որոնք երբեմն կհաջողեին ներս սպրդի Պոլսուն դռներեն: Հաճախ բացառություն էին հայ կաթոլիկներն ալ, որոնք հայ չին կոչվեր այլևս, այլ... «կաթոլիկ միլիտիթ»:

Արդ, հայ գավառը դժգու էր Ազգեն և իր պատրիարքեն, ու միշտ կտրտնջար, թե անոնք լքած են զինք իր բախտին: Ինքզինք զրկված կզգար ան որևէ պաշտպանութենե բոլոր այն կեղեքումներուն, ճնշումներուն և սեղմումներուն զիմ, որոնց ենթակա էր տեղական իշխանությանց կողմե, և որոնք կսաստկանային քանի կերպարեր վարչակարգը:

Օրմանյան իր զիմ ուղղված այն մեղադրանքներուն, թե խուզ մնացած է գավառի ցավերուն հանդեպ, կսիր պատասխանել, թե ոչ մեկը իրեն շափ: սիրած է գավառը թե, երրու օրվան եպիսկոպոսներեն շատերը խուզս կուտային գավառեն, ինք Կարինեն սկսած է իր դործունեությունը, զոն մնացած է ամբողջ յո-

Մը տարի, և անկե բաժնված է ոչ իր բաղ-
անքովը: Թե, ասկե զատ, սորվեցուցած է իր
աշաւաշակերտներուն ալ գավառը սիրել, և աշխա-
տառած է, որևէ թեմ թափուր վթողուլ:

Եթե Օրմանյան չէ կրցած գավառի բոլոր
բացակերուն դարձանը գտնել, ան կըսե, թե մեղ-
քը իրենը չէր եր Համիդ գավառ բառն
ու կոսուկար, ուրիշ ի՞նչ կրնար ընել հայոց պատ-
րիքարք, եթե ոչ բողոքել ո ողոքել: Ճիշտ է,
արդարեւ, որ ան դիմումներ ըրած էր, որ
պեսզի գավառի մեջ տիրող ճնշումները մեղ-
ձանան, տուրքերու առթիվ կիրարկվող կեղե-
րումները վերցվին, ինչպիս և ճամբորդու-
թյան սեղմումները թեթևնան: Բայց ճիշտ
է և այն, որ Օրմանյան բաղձացող չէր, որ
հայերուն թուլ տրվի զանգվածորեն հեռա-
նալ գավառնե:

Օրմանյան ինքն է, որ կիսուտովանի. «Գա-
վառացվոց մայրաքաղաք գալու արգելքին
զիմ մասնավոր պաշտպանություններ ըրած
եմ, բայց ընդհանուր պատության չիմ աշ-
խատած, վասնզի ուղած եմ, որ ազգային գա-
վառներ ազգայիններով բազմամարդանան,
և Հայարնակ նահանգները անհայացնելու
վասնզը հեռանա»¹¹¹:

Փղոտ խնդիր էր եղեր սկիզբեն ի վեր հայ
գավառները շամայացնելու հարցը: Շատեր
այն համոզման էին, որ ինչ ալ ըլլան ցավե-
րը գորս կկրեր իր օջախին մեջ, հայը պետք
չէր իր բույնը լքեր: Օրմանյան ևս այդ կար-
ծիքն եղած է առաջին օրին:

Ահա թե ինչ կրե ինքն իսկ այդ մասին.
«Համարձակ պետք է ըսենք, թե Օրմանյան
Ղալաթիո քարոզչության և Կարսո առաջնոր-
դության օրերեն սկսելով հայտնի հակառա-
կորդ եղած էր զավառացիներու պանդիստու-
թյան, որ հայարնակ գավառներու հայարնա-
կությունը կնվազեցներ, լրյալ ընտանիքները
խեղճության կմատներ, և քաղաքներու ու նա-
շահանգիստներու մեջ պանդուստ բազմու-
թյան կենցաղականն ու բարոյականը կապա-
կաներ: Նա հայերուն իրենց ծննդավայրին
մեջ մնալուն և աճելուն մեծ քարոզիչը եղած
էր, որ եթե գավառացին տեղական դժվարու-
թյուններու դիմաց կդունվեր, այն ալ օգտա-
կար կսեպեր անոր միտքը սրելու և սիրու
մրելու և յուր բնագավառին մեջ յուր բարօ-
րությունը պատրաստելու: Այդ ձեզ նպաստա-
վոր կդուներ նաև Հայկական խնդիրին տեսա-
կեռով. զի հայկական տարրին նվազելովը
Հայկական խնդիրին գետինն ալ կինասվեր,
կալվածն ալ կիտանդվեր: Այս վնասեն ազա-
տելու համար հարկ էր հայ տարրը անեցնել,
ընդարձակել, դաստիարակել, հարստացնել,
հողատեր ընել և հոգալ, Հայկական խնդի-
րին ամրանալուն ծառայել: Ահա Օրմանյանի

և Վարչության տեսակետը, անպատրաստ և
ապաժաման և անբանական փորձեր և ցուց-
ցերն խուսափիլ, որոնք Ազգը ևս քան զես
տկարացնելու և վտանգելու կառաջնորդեին:
Այս նպատակով էր, որ շաշխատեցան հայուն
տեղեն ենելը զյուրացնելու, ալ մանավանդ
աշխատեցան գուրս ելուներուն անպայման
և համարձակ վերադրձին, և բոլոր փախըն-
տական հայերուն իրենց տեղերը դառնա-
լուն»¹¹²,

Բայց չէր բավեր պնդել, որ հայը իր հայ-
րենական օջախին կապված մնա միշտ:
Պետք էր ամոքել իր վիշտերն ու կարիքները:
Իսկ Պատրիարքարանը զուրկ էր այդ ճնա-
րավորութենեն: Ինչ որ կիրութեր ան, հեռու էր
աղետը գարմանել, ոչ իսկ սփոփելի զարն:
Այդ փորձերը ձևական միթարութենե մը
անդին չէին կրնար անցնիլ հաճախի:

«Գավառներու և վիճակներու հետ, — կը-
սե Օրմանյան, — տեսական և հաստատուն
հարաբերություն եմ պահած, ամեն գիրերու
պատասխանած եմ [Պատրիարքարանի] դի-
վանները ձանձրացնելու շափ, փորձով գիտ-
նալով, որ խնդրանքնին գոհացնել անհնա-
րին եղած պարագային իսկ, զավառացվոց
մեծ միթարություն է գոնե երկուող պա-
տասխան մը առնել, որով կհուսադրվին, թե
լրված և երեսե թողված չեն»¹¹³:

Պղտիկ սպեղանիներով մեծ վերք մը կա-
րելի չէր ամոքել: Շատ մեծ էր ժողովությունի
մը տանջանքը իր անզորության մեջ, և շատ
խորունկ իր հուսահատությունը, որպեսզի
սփոփիչ քանի մը խոսքով մեղմանար ահա-
վոր վիշտը:

Ու մանավանդ նյութական կարիքներն աւ
կային, ու տեղ-տեղ կարոտը նաև օրվան
պատառ մը հացին:

Օրմանյան, երբ պատրիարքության կոչվե-
ցավ, ինքովինք գտավ ահավոր պատկերի մը
առջև: Ազգային կյանքը կազմալուծված էր,
մարդիկ, սարսափահար, քաշված էին իրենց
պատյանը, ու զազան մը կար, որ կհսկեր
քիչ հեռուն, ճիրանները միշտ բացած: Ու
փոխարեն, կարիքներու ծով մը առջին, ու
զավառ մը, որ ճար ու զարման կաղերսեր:

Օրմանյան այդ զավառը կճանչնար, ու
անոր ցավերը գիտեր որևէ մեկն ավելի:
Յոթը տարիներ ապրած էր ինք անոր ծոցին
մեջ, ու մոտեն տեսած անոր կարուտություն-
ները: Այս օրերուն սովոն էր, որ կլկեր զայն:
ու պետք էր եղած սովին դեմք կույիլ: Սովե-
լոց հանձնաժողովը, որուն աշխատակցած
էր Օրմանյան իր եռանդին բոլոր թափուր,
հրաշք էր գործած ատենին:

¹¹² «Ազգապատում», 9, էջ 5085.

¹¹³ «Ետուք և խոսք», էջ 32.

(Շարունակելի)